А.С. АКЕЛЯН, А.А. АБРААМЯН, А.С. КАСИЕВ

ПРОГНОЗИРОВАНИЕ ОПЕРАЦИОННЫХ ДОХОДОВ КОМПАНИИ “РОСТЕЛЕКОМ”

Быстрые темпы роста международной экономики в последние десятилетия обусловлены инновациями и их применением в сфере высоких информационных и телекоммуникационных технологий. Проведено прогнозирование экономических показателей предприятия сферы ИКТ на примере операционных доходов компании “Ростелеком”.

Ключевые слова: операционный доход, прогнозирование, аддуитивная модель, экспоненциальная модель, экспоненциальное уравнивание, фактор тренда.

A.S. AKELYAN, A.A. ABRAHAMYAN, A.S. KASIEV

THE FORECAST OF THE OPERATION INCOMES OF THE ROSTELECOM COMPANY

The rapid growth of world economy in recent decades are conditioned by innovations and their application in the field of high information and telecommunication technologies. The forecast of economic indicators of the ITC companies on the example of the operation income of Rostelecom CJSC is carried out.

Keywords: operation income, forecast, additive model, exponential model, exponential smoothing, trend value.

ՀՏԴ 005.95/.96:37

Ռ.Ս. ՀՈՎՍԵՓՅԱՆ, Հ.Զ. ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

Դիտարկված են պրոֆեսիոնալ կրթության մակարդակներին վերաբերող և աշխատանքային ռեսուրսների վրա ազդող հարցեր: Վերլուծված են ժամանակակից պրոֆեսիոնալ կրթության մի քանի հասկացություններ, որոնք հետաքրքրություն են ներկայացնում պրոֆեսիոնալ մանկավարժության և պրոֆեսիոնալ կրթության էկոնոմիայի բնագավառում:

Առանցքային բառեր. պրոֆեսիոնալ կրթություն, պրոֆեսիոնալ պատրաստություն, պրոֆեսիա, մասնագիտություն, որակավորում, կոմպետենցիա:

Փորձը ցույց է տվել, որ հիմնարար առարկաներն արտադրական պրակտիկային ստորադասելու դեպքում առաջանում է գիտելիքների համակարգի

խզում, որը հանգեցնում է պրոֆեսիոնալ պատրաստության հաջորդականության խախտման: Դա նշանակում է, որ հիմնարար գիտելիքների կապն արտադրական ուսուցման հետ պետք է կազմակերպել՝ հաշվի առնելով դրանց կարևորությունը: Արտադրական պրակտիկան կազմակերպելիս անհրաժեշտ է ամենայն լրջությամբ վերաբերվել ոչ միայն ձեռնարկության նյութական բազային, այլ նաև պրակտիկան կազմակերպող մասնագետների պրոֆեսիոնալ պատրաստվածության մակարդակին:

Այս հանգամանքը ստիպում է լուրջ կերպով վերաբերվել արտադրական ուսուցման նպատակով մասնագիտական կադրերի պատրաստման գործին, քանի որ դրանից է կախված տեխնիկական թեքումով պրոֆեսիոնալ ուսուցման բոլոր մակարդակների համար մանկավարժական պատշաճ պատրաստվածություն ունեցող մասնագետների պատրաստման գործը, իսկ այդ մակարդակները, համաձայն կրթության մասին ՀՀ օրենքի, ներկայումս երեքն են՝ նախնական (արհեստագործական), միջին և բարձրագույն:

Այսօր այդ գործին ներկայացվող սոցիալական պահանջից ելնելով՝ մանկավարժական գիտության առջև ծառացած է «ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում» համակարգի կազմակերպման ու իրականացման արդիական խնդիրը: Ժամանակակից մարդու պրոֆեսիոնալ կրթությունը հանդիսանում է այդ համակարգի անբաժան մասը: Բնականաբար, ներկայումս ուսուցման նպատակներն ու խնդիրները գնալով ավելի են բարդանում, ինչն էլ իր հերթին ստիպում է զբաղվել ևս մի անհետաձգելի խնդրով՝ կատարելագործել պրոֆեսիոնալ կրթության գործող համակարգը: Մեր կարծիքով, հասունացել է ժամանակը, երբ պետք է շեշտը դնել պրոֆեսիոնալ կրթության մեջ նշված բոլոր օղակների փոխներգործությանը, դրական ժառանգորդությունն ու ամբողջականությունն ուժեղացնելու և կատարելագործելու հիմնախնդրի վրա:

Եթե նախնական պրոֆեսիոնալ կրթության ուսումնական հաստատություններում պրոֆեսիոնալ ուսուցումն իրականացվում է լոկ որպես մարդուն աշխատանքային գործունեության համար նախապատրաստվելուն ուղղված վերջնական նպատակ, ապա երիտասարդությունը չի տեսնում իր պրֆեսիոնալ հետագա աճի ու զարգացման հեռանկարը: Ավելորդ չէր լինի մատնանշել, որ մանկավարժական գիտության մեջ ընդունված բազմափորձ տեսակետը վկայում է այն փաստը, համաձայն որի մասնագետի պրոֆեսիոնալ պատրաստության ավելի բարձր մակարդակը պետք է կառուցվի նախորդ՝ ավելի ցածրի հիման վրա: Դարերի փորձով ապացուցված այս օրինաչափության խախտումը հանգեցնում է նրան, որ

մասնագետի պրոֆեսիոնալ պատրաստման գործընթացում մասնագիտություններին տիրապետելու բնականոն հաջորդականության մեջ խզում է առաջանում: Խոսքն այն մասին է, օրինակ, եթե տեխնիկական բուհի շրջանավարտը պրոֆեսիոնալ որակավորում ստանալուց առաջ չի տիրապետել բանվորի ու միջին որակավորման մասնագետի մակարդակներին համապատասխանող գործունեությանը, ապա նա, փաստորեն, չի կարող համարվել նախապատրաստված ավելի բարձր՝ ճարտարագետի մակարդակի գործունեությունն իրականացնելուն: Այստեղից, մեր կարծիքով, այն հրատապ հարցի պատասխանը, թե ինչու՞ տեխնիկական բուհն ավարտելուց հետո, բարձրագույն կրթություն ունեցող մասնագետը պատրաստ չէ կատարելու իր պրոֆեսիոնալ պարտականությունները: Այս հանգամանքն էլ, իր հերթին, հանգեցնում է նրան, որ հետագայում հարկ է լինում որոշակի միջոցներ ու ժամանակ ծախսել դիպլոմավորված մասնագետի վերաուսուցման կամ վերապատրաստման վրա:

Քննադատության չի դիմանում այն փաստը, որ մեր կրթական համակարգում գոյություն ունեցող մասնագետների պրոֆեսիոնալ պատրաստման գործընթացը չի ապահովում պրոֆեսիոնալ զարգացման անընդհատությունն ու փուլայնությունը, չունի հեռանկարային կողմնորոշվածություն, հաշվի չի առնում աշխատաշուկայի գործոնը, կապված չէ ծնունդ առնող ժամանակակից տեխնոլոգիաների հիման վրա լայն պրոֆիլի և բարձր որակավորմամբ մասնագետի պատրաստման սոցիալ-հոգեբանական ու մանկավարժական կանխորոշման մոդելի մշակման հետ:

Ակնհայտ է, որ բանվորների, տեխնիկների, ճարտարագետների պրոֆեսիոնալ պատրաստվածությանը ներկայացվող պահանջները շատ հարցերում չեն համապատասխանում նախնական, միջին և բարձրագույն կրթությանը ներկայացվող ժամանակակից պահանջներին. ներկայումս «դպրոց-բուհ» համակարգում բարձրագույն կրթություն ստանալու համար մարդն ստիպված է ծախսել 16-17 տարի: Դրան զուգահեռ՝ «դպրոց-նախնական մասնագիտական ուսումնարան-քոլեջ-բուհ» համակարգում ճարտարագիտական բարձրագույն կրթություն ստանալու համար անհրաժեշտ է ծախսել շուրջ 20 տարի:

Տեղին է նշել, որ երաժիշտների մասնագիտական պատրաստումն իրականացնողներից ոչ մեկի մտքով չի անցնի, օրինակ, կոնսերվատորիա ընդունել այնպիսի մարդկանց, ովքեր չունենան նախնական և միջին մասնագիտական երաժշտական կրթություն: Սակայն տեխնիկական բուհերում ճարտագետի պրոֆեսիոնալ պատրաստմանը ներկայացվող որակավորման մակարդակին

ձգտում են հասնել առանց նախորդող՝ բանվորի ու տեխնիկի մակարդակների վրա հիմնվելու:

Նմանատիպ օրինակներ կարելի է բերել նաև ուրիշ պրոֆեսիաների գծով: Այս հարցին լուծում տալու նպատակով եկել է ամբողջացնելու տեխնիկական թեքումով պրոֆեսիոնալ կրթության համակարգի ստեղծման ժամանակը՝ նախնական, միջին և բարձրագույն մակարդակներով մասնագետների պրոֆեսիոնալ պատրաստումն ինտեգրելու ճանապարհով: Դա հնարավորություն կընձեռի սկզբունքորեն նոր ձևով լուծել տեխնիկական թեքումով մասնագիտական կադրերի պատրաստման խնդիրը:

Այս իմաստով, պրոֆեսիոնալ կրթության ինտեգրման կազմակերպչական-մանկավարժական հիմունքները պարզաբանելու նպատակով, անդրադառնանք այդ կադրերի պրոֆեսիոնալ գործունեությանն ու մասնագիտական պատրաստմանը վերաբերող էական մի շարք հասկացությունների մեկնաբանմանը:

<u>Պրոֆեսիոնալ կրթությունն</u> անձի պրոֆեսիոնալ կայացման և զարգացման գործընթացն ու արդյունքն է: Այն ուղեկցվում է վարձու աշխատանքի ոլորտում կոնկրետ պրոֆեսիաների ու մասնագիտությունների գծով մասնագիտացված գործընթացների կատարման համար անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձեռքբերմամբ: Ընդհանուր կրթության համեմատ՝ պրոֆեսիոնալ կրթության առանձնահատկությունները պրոֆեսիաների ու մասնագիտությունների, աշխատողների պատրաստման ձևերի մեծ բազմազանությունը, ուսումնաձրագրային փաստաթղթերի կյանքի կարճատևությունն են, քանի որ պրոֆեսիոնալ ուսուցման բովանդակությունն անմիջականորեն պայմանավորված է գիտատեխնիկական առաջընթացի արդյունքում աշխատանքների բովանդակության արագ փոփոխմամբ:

<u>Պրոֆեսիոնալ պատրաստումը</u> գործունեության որոշակի բնագավառում աշխատանք կատարելու հնարավորություն ընձեռող գիտելիքներին, կարողություններին ու հմտություններին տիրապետելու գործընթաց է: Դրա նպատակը սովորողների կողմից որոշակի աշխատանքի կատարման համար անհրաժեշտ հմտությունների արագացված ձեռքբերումն է: Այն չի ենթադրում սովորողների կրթական մակարդակի բարձրացում:

Մարդկային ռեսուրսների զարգացման նկատմամբ նոր՝ առավել արդյունավետ մոտեցումն ապահովելու նպատակով այդ համակարգերը միմյանց հետ պետք է գործառնորեն ու կազմակերպչորեն միավորել:

Կրթությունն աղքատության դեմ պայքարի զորեղ միջոցներից մեկն է: Ամեն մի երկրի համար բարեկեցության հիմք է հանդիսանում ժողովրդի տեխնիկական ու պրոֆեսիոնալ ներուժը: Ի լրումն հանրակրթական գիտելիքների՝ **տեխնիկական և պրոֆեսիոնալ կրթությունը** ներառում է տեխնոլոգիաների ու դրանց հետ սերտորեն կապված գիտակարգերի ուսումնասիրում և կոնկրետ պրոֆեսիաների գծով աշխատանքային գործունեության համար անհրաժեշտ գործնական հմտությունների, նոու-հաուների, գիտելիքների ձեռքբերում ու յուրացում:

Տեխնիկական և պրոֆեսիոնալ կրթությունը տիրապետումն է այնպիսի կոմպետենցիաների, որոնք դուրս են կոնկրետ աշխատատեղում անհրաժեշտ պրոֆեսիոնալ հմտությունների շրջանակներից: Այստեղ ավելորդ չենք համարում հիշեցնել արդեն ոչ հազվադեպ հանդիպող երկու իմաստուն ասացվածքները. «Կրթությունն այն է, ինչ մնում է նրանից հետո, երբ դուք կմոռանաք այն ամենը, ինչ որ ձեզ սովորեցրել են»: Պակաս իմաստուն չէ նաև երկրորդ խորհուրդը. «Տվեք մարդուն ձուկ և նա ամբողջ օրը կուշտ կլինի, սովորեցրեք նրան ձուկ բռնել և նա ողջ կյանքում կուշտ կլինի»: Եթե ասվածին ավելացնենք՝ «Ցույց տվեք նրան, թե որտեղից ձուկ բռնի, կբարձրացնեք նրա կենսամակարդակը»:

Պրոֆեսիան հատուկ պատրաստվածությամբ և աշխատանքային փորձի արդյունքում ձեռք բերված տեսական հատուկ գիտելիքների ու գործառնական հմտությունների համալիրին տիրապետող մարդու աշխատանքային գործունեության տեսակ է և նրա գոյության աղբյուրը:

Մասնագիտությունը աշխատանքային գործունեության գործառնորեն առանձին բնագավառ է որոշակի պրոֆեսիայի շրջանակներում: Մասնագիտությունները ստորաբաժանվում են՝ կախված աշխատանքի առարկայի առանձին բաղադրամասերի առանձնահատկություններից, ինչպես նաև աշխատանքային գործունեության մեջ օգտագործվող գործիքներից ու միջոցներից (օրինակ՝ փականագործի պրոֆեսիան ստորաբաժանվում է փականագործ-գործիքագործի, փականագործ-նորոգողի և այլ մասնագիտությունների, բժշկինը՝ բժիշկ-թերապևտի, բժիշկ-վիրաբույժի և այլ մասնագիտությունների):

Այսպիսով՝ մասնագիտությունը պրոֆեսիայի բաղկացուցիչ մասն է և ավելի սահմանափակ իմաստ ունի: Ուստի «պրոֆեսիա» եզրույթը չի կարելի նույնացնել «մասնագիտություն» եզրույթի հետ: Աշխատանքի որակն ու քանակը կախված են կատարողի որակավորման մակարդակից: Ներկայումս պրոֆեսիոնալ մանկավարժության մեջ «որակավորում» հասկացությունը սկզբունքային կարևոր իմաստ ունի [1]:

Որակավորումն անձի պատրաստվածությունն է պրոֆեսիոնալ գործունեության համար, աշխատողի մեջ գիտելիքների, կարողությունների ու հմտությունների առկայությունը՝ նրա կողմից որոշակի աշխատանք կատարելու համար: Որակավորման բուն էությունը՝ «միջուկը» (տեխնիկական ու պրոֆեսիոնալ գիտելիքներն ու կարողությունները) շուտ հնանալու միտում ունի՝ ինչն էլ առիթ է ծառայում «որակավորում» եզրույթը «կոմպետենտությամբ» փոխարինելուն: Դա աշխատողի անձնական որակները բնութագրող ավելի ճկուն, արդիական ու պրագմատիկ հասկացություն է:

Կոմպետենտությունը՝ ըստ արտադրության էկոնոմիկայի ու կառավարման բուն իմաստի, որոշակի սոցիալ-պրոֆեսիոնալ կարգավիճակի անձանց գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մակարդակի համապատասխանությունն է իրենց կողմից լուծվող խնդիրների բարդության մակարդակին: Ի տարբերություն «որակավորում» եզրույթի, այն բնութագրող նեղ մասնագիտական գիտելիքներից ու կարողություններից բացի, ներառում է այնպիսի հատկություններ, ինչպիսիք են՝ նախաձեռնությունը, համագործակցելու կարողությունը, խմբում աշխատելու և հաղորդակցվելու ընդունակությունները, տոլերանտությունը, սովորելու ձգտումը, տրամաբանորեն մտածելու, տեղեկույթն ընտրելու ու օգտագործելու կարողությունը: Կոմպետենտ մասնագետը ոչ միայն պետք է հասկանա հիմնախնդրի էությունը, այլև կարողանա այն գործնականորեն լուծել [2]:

Մարդու պրոֆեսիոնալ հատկանիշները ձևավորվում ու դրսևորվում են աշխատանքային գործունեության մեջ: Նրա մասնագիտական պատրաստվածության մակարդակի մասին կարելի է դատել գործունեության այն ձևերի միջոցով, որոնք նա ի վիճակի է կատարելու: Մարդկային ռեսուրսների բնականոն զարգացումն ապահովելու համար պրոֆեսիոնալ պատրաստման որակավորման ավելի բարձր մակարդակը պետք է հենվի նախորդ՝ ավելի ցածրի վրա: Դա նշանակում է՝ բարձրագույն և միջին մասնագիտական կրթություն պետք է տալ այն մարդկանց, ովքեր ունեն մասնագիտական որակավորման գոնե նախնական մակարդակ, որը, եթե նրանք չեն ստացել մինչև բուհը կամ քոլեջը, ապա պետք է ստանան այդ ուսումնական հաստատություններում ուսանելիս: Դա կապահովի երիտասարդության պրոֆեսիոնալ կրթության շարունակականությունն ու ինտեգրման գործընթացը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Профессиональная педагогика: Учебник /Ассоциация профессионального образованияа. -М.,1997.

2. **Чошанов А.А.** Гибкая технология модульного обучения. -М.,1996.

Р.С. ОВСЕПЯН, Г.З. МУСАЕЛЯН

РАЗВИТИЕ ТРУДОВЫХ РЕСУРСОВ И ПРОФЕССИОНАЛЬНОЕ ОБРАЗОВАНИЕ

Рассмотрены вопросы уровней профессионального образования и развития трудовых ресурсов. Проанализированы некоторые понятия современного профессионального образования, представляющие интерес в области профессиональной педагогики и экономики профессионального образования.

***Ключевые слова*:** профессиональное образование, профессиональная подготовка, профессия, специальность, квалификация, компетенция.

R.S. HOVSEPYAN, H.Z. MUSAYELYAN

DEVELOPMENT OF LABOUR FORCE AND PROFESSIONAL EDUCATION

The issues on the levels of professional education and development of work force are considered. some concepts of modern professional education are analyzed, concerning the field of professional pedagogics and the economy of professional education.

***Keywords**:* professional education, professional training, profession, specialty, qualification, competence.

ՀՏԴ 005.94:37

Ռ. Ս. ՀՈՎՍԵՓՅԱՆ, Հ.Զ. ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ

ԿԱԴՐԵՐ ՓՈՔՐ ՈՒ ՄԻՋԻՆ ԲԻԶՆԵՍԻ ՀԱՄԱՐ

Քննարկվում են պրոֆեսիոնալ կրթության պահանջարկի կանխատեսմանը վերաբերող հարցեր: Առաջարկվում է բարձրագույն պրոֆեսիոնալ կրթությունը նախնական (արհեստագործական) ու միջին մասնագիտական կրթության հետ համեմատելու և մասնագիտական որակավորումների նոր համակարգի ստեղծմանը նոր մոտեցում ունենալու խնդիր:

Առանցքային բառեր. պրոֆեսիոնալ կրթություն, փոքր ու միջին բիզնես, ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում, նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում փոքր ու միջին ձեռնարկությունների գործունեության բնագավառում որոշակի առաջընթաց է նկատվում: